Հաշվետու՝ 2023թ.-ին, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն, հավատարիմ մնալով սահմանված ռազմավարական նպատակների արդյունավետ իրագործման ավանդույթին, արձանագրեց մի շարք նվաճումներ և որոշ հիմնական ցուցանիշների աճ, շուկայում դիրքի ամրապնդում՝ շնորհիվ հաճախորդների վստահության, հավատարմության և Բանկի աշխատակիցների նվիրված ջանքերի, արդյունավետ ու ակտիվ թիմային աշխատանքի՝ ապահովելով բանկի շարունակական կայուն զարգացումը և գործունեության որակապես նոր՝ առավել արդիական փուլին անցումը:

Բանկի գործունեության կարևորագույն գնահատականը՝ ձևավորված շահույթը կազմել է 4,740.1 մլն դրամ:

2023թ., նախորդ տարվա համեմատ, բանկի ակտիվներն աճել են 55.6 մլրդ դրամով կամ 13.6%-ով՝ կազմելով 464.9 մլրդ դրամ, ընդ որում՝ հաճախորդներին տրված վարկերը և փոխատվություններն աճել են 32.0 մլրդ դրամով կամ 12.3%-ով՝ կազմելով 291.4 մլրդ դրամ, ներդրումային արժեթղթերը՝ 12.8 մլրդ դրամով կամ 27.0%-ով՝ կազմելով 60.2 մլրդ դրամ:

Բանկի պարտավորությունները, որոնք ձևավորվել են ներքին և արտաքին շուկաներից ներգրավված ժամկետային միջոցների և ցպահանջ միջոցների հաշվին, հաշվետու տարում աճել են 12.3%-ով կազմելով՝ 404.4 մլրդ. դրամ: Հաճախորդների նկատմամբ պարտավորություններն աճել են 27.7 մլրդ դրամով կամ 17.8%-ով՝ կազմելով 183.9 մլրդ դրամ: Բանկի կապիտալն աճել է 23.1%-ով՝ կազմելով 60.5 մլրդ դրամ՝ հիմնականում արտաքին աղբյուրի՝ կանոնադրական կապիտալի համալրման, և ներքին աղբյուրի՝ ձևավորված շահույթի հաշվին:

Հաշվետու տարում բանկը շարունակեց փոխշահավետ համագործակցությունը միջազգային ֆինանսավարկային կառույցների և արտերկրի խոշորագույն առևտրային բանկերի ու ֆինանսական կազմակերպությունների հետ՝ ընդլայնելով համագործակցության շրջանակները, գործող ծրագրերը, ինչպես նաև ծավալվեց գործակցություն նոր բանկային ծառայությունների ոլորտում: Այսպես. 2023թ. բանկը միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ կնքել է 10.0 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագրեր, որոնցով ներգրավված ռեսուրսներն ուղղվելու են միկրո, փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը և զարգացմանը:

Հաշվետու տարվա բանկի արդյունավետ տարածքային քաղաքականության մասին են վկայում հաշվետու տարում և նախորդ տարիներին գործարկված մասնաճյուղերի կայուն և դինամիկ զարգացումը:

Բանկի զարգացման արձանագրված հաջողությունները մեծապես պայմանավորված են արդյունավետ կադրային քաղաքականությամբ, որը զուգակցում է կադրերի վերապատրաստումը գործուն խրախուսման համակարգի ներդրման հետ:

Բանկային համակարգում սուր մրցակցությունը նպաստում է համակարգի ընդհանուր առաջընթացին՝ պայմանավորված մրցակցությանը դիմանալու նպատակով բանկերի կողմից ձեռնարկվող միջոցառումներով: ՀՀ բանկային շուկայում դիրքերը պահպանելու և առաջընթաց զարգացում ապահովելու նպատակով՝ բանկը.

- մեծ ուշադրություն է դարձնում մատուցվող ծառայությունների ոչ միայն քանակական բազմազանմանը՝ նոր վարկային և ավանդային ծառայությունների մշակման և ներդրման առումով, այլ նաև որակի

բարձրացմանը, հաճախորդների սպասարկման ոլորտում նորագույն արդիական թվային տեխնոլոգիաների կիրառմանը,

- արձագանքելով ներքին շուկայում տեղի ունեցող զարգացումներին՝ բանկը վարում է ճկուն սակագնային և տոկոսադրույքային քաղաքականություն:

Ռիսկերի բացահայտման և կառավարման գործուն համակարգի կատարելագործմանն ուղղված միջոցառումները մշտապես գտնվում են բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում: Բանկի ռիսկերի կառավարման գոյություն ունեցող համակարգը, որը ներառում է ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ռիսկերի կառավարման» քաղաքականությունը՝ ըստ տարբեր ռիսկատեսակների կից կարգերով մշտապես զարգանում ու կատարելագործվում է, որը առաջիկայում նույնպես կզարգանա, կկատարելագործվի և կունենա նոր որակական մակարդակներ:

Խորհրդի անդամ Ռ. Հայրապետյան

Խորհրդի անդամ Լ. Պետրոսյան

29.04.2024թ